

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԽՈՐԵՆԵԱՆ ԵՐԿՍԵՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՀԱՅՈՑ Ի ԳԱՀԻՐԵ

ՎԱՐԺԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱԻԱՊԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՏ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃՈՂՈՎԸՆ

16/28 Սեպտեմբեր 1895 ի նիստին մէջ:



ԴԱՀԻՐԵ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

1895

ԱՆՊ
- ԶԱՀԻՐԵ-

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԽՈՐԵՆԵԱՆ ԵՐԿՍԵՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՀԱՅՈՑ Ի ԳԱԼԻՐԵ

ՎԱԻԵՐՅԱՅԱԼ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱԽԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒՔԵԱՆ ՊԱՏ- ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

16/28 Սեպտեմբեր 1895 ի նիստին մէջ:



ԴԱՀԻՐԵ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԳԱՂԱՔԱՅԱՆ

1895

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԽՈՐՀՆԵԱՆ ԵՐԿՍԵԹ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՅՈՅ Ի ԳՈՀԵՐԵ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա.

Յայտագիր ուսմանց.

Յօդուած 1. — Աղջային Խորէնեան երկսեռ
վարժարանս ոնի ուսմանց յայտագիր մը՝ լեց տարին
ներու բաժնուած (1) *

Աւանդելի ուսումնելն են :

Կրօնի եւ բարոյագիտոթիւն .

Հայերէն լեզու .

Արաքերէն լեզու (միայն մանշերու) .

Ֆրանսերէն լեզու .

Թուարանոթիւն .

Ազգային Պատմոթիւն .

Աշխարհագրոթիւն .

(1) Տես այս բաժանմանց մանրամասնութիւնը ուսմանց ընդհանուր ծրագրին մէջ :

Երաժշտութիւն.

Ասեղնազործ, կար, ձեւ (միայն աղջկանց).
Մարմնամարզութիւն.

Դասընթացքի տարեկան բաժանումներն են.

Ա. Տարրական դասընթաց, երկու surh. —
Surhf ուսանողին 7 — 8.

Բ. Միջին դասընթաց, երկու surh. — Surhf
ուսանողին 9 — 10.

Գ. Բարձրագոյն դասընթաց, երկու surh. —
Surhf ուսանողին 11 — 12.

F.

Պայմանն ընդունելութեան առակերտաց.

Յօդ. 2. — Վարժարանս երկու սեռէ հայազգի
աշակերտաներ կ'ընդունի՝

Ա. Եթէ վեց տարին լրացտցած է.

Բ. Եթէ պատուաստեալ է.

Գ. Եթէ ծանր յանցանքի համար արդէն դ պրոցի
վարչութեան որոշմամբ արտաքսուած չէ.

Դ. Եթէ Աղդ. Վարչութեան կողմանէ արտօնա-
դիր ունի 'ի ձեռլին (տես յօդ. 6):

Յօդ. 3. — Վարժարանս առանց թոշակի կ'ընդու-

նի աղդային մանկան թէ՛ կարող և թէ՛ սնկարող ։
Դպրոցական առարկայք ձրի կը տառին վկայեալ
աղքատաց, իսկ կարողք ուարտին վճարել յիշեալ
առարկայից գինը։

Ծնողաց վիճակի վկայոթիւնը Աղդ. Վարչոթեան
արտօնագրոյն մէջ կհաստատուի։

Գ.

Պարտուուրիւնի առակերտաց.

Յօդ. Ա. — Ամեն աշակերտ ուարտաւոր է՝

Ա. Ժամանակացոյցի համեմատ դպրոցի բացման
և փակման ժամերուն ճշգոթեամբ հետ
ակիլ (տես յօդ. 43)։

Բ. Երբէք բացակայ չինիլ առանց բանաւոր
պատճառի զօր պէտք է հաստատէ իր ծնուցաց կողմէ առ Տնօրէն։ Առանց բանաւոր
պատճառի յաճախակի բացակայ գըտնող աշակերտք կ'մերժուին վարժարաւառանէս։

Գ. Դպրոցի հիմնական և ներքին կանոնաց և
պաշտօնէից հրահանդներուն կատարեալ
հնագանդիլ։

Դ. Մաքրապահութեան բոլոր օրէնքներն յարդել, նոյնակէս և մաքուր հայերէն խօսիլ։

Ե. Դուրսցի կահ կարասիքն, դիղքերն և գործիքներն չիանդարել, չաւրել. միշտ ամեն սխալմունքէ և անկարգութենէ զգուշանալ և ճշգիւ կատարել իւր ամեն բարոյական և ուսումնական պարտաւորութիւնքն:

Դ.

Ծնող.

Յօդ. 5. — Ծնողք, որ փափագին իրենց զաւակներն վարժարան դրկել, պարտին տեղեկանալ սոյն պայմանաց և ուսմանց ծրագրին. առ այս կը դիմեն տեղոյս Առաջնորդ արանի Դիւանատունն ուր ձրիաբար կ'ստանան Կանոնագրոյս տպեալ մի օրինակն :

Յօդ. 6. — Ծնողք, որ կ'փափագին իրենց զաւակաց համար ընդունելութեան արտօնագիր ստանալ, պարտին դիմել իրենց զաւակով յԱռաջնորդ արան և ճշգիւ պատասխանել հարցուած տեղեկութեանց (⁽¹⁾):

(1) Արտօնագրոյն մէջ բահանալի մը ներկայութեամբ կը հաստառուի եւ կը նշանակուի սղուն անունը, մականունը, ծննդավայրը, թէ պատուասեալ է կամ ոչ, տարիքը, թէ արդէն ուրիշ դպրոց յանախած է կամ ոչ, նոր արհեստն ու վիճակը, եւ ։ Ծնողք այս արտօնագրով Տնօրէնի կը ներկայեն իրենց զաւակն զոր անմիջապէս իրնդութիւնի վարժարան երէ արտօնագիրն համաձայն է Կանոնագրիս 2րդ յօդուածի բամապրութեան :

Յօդ. 7. — Ծնողք պարտաւոր են իրենց զաւակաց բացակայութեան պատճառը Տնօրէնին հաղորդ ել:

Յօդ. 8. — Ծնողք սաշտաւոր են իրենց բաւակաց մաքրապահութեան հոգ տանիլ, տան և փողոցի մէջ ունեցած վաշնանց մասին տեղեկութիւն տալ Տնօրէնին և ըստ ամենայնի ջանալ որ իրենց զաւակունք Վարժարանի կանոնաց համաձայն ընթացք ունենան և յարդեն իրենց դասերն ու դասատուներն:

Յօդ. 9. — Ծնողք, որ կամին իրենց զաւակաց կամ Վարժարանի վեշտերեալ դէպքի կամ հարցի մասոթիւ խնդրամատոյց լինել առ Ազգ. Վարչութիւն, պարտին դիմել առ Կրթական Խորհրդական. ընդունելութեան սովորական արտօնագիրն՝ այս պարագայիս աշակերտին վերընդունելութեան չկընար ծառայել:

Յօդ. 10. — Արդէն հրաժարեալ կամ հրաժարեցուցեալ աշակերտի մը ծնողք որ կամին վերստին Վարժարան ուղարկել իրենց զաւակն, պարտին դիմել առ Կրթական Խորհրդական. ընդունելութեան սովորական արտօնագիրն՝ այս պարագայիս աշակերտին վերընդունելութեան չկընար ծառայել:

Յօդ. 11. — Ծնողք, որ առանց բանաւոր պատճառի մը կամին դպրոցի վեցամեայ շրջանի ամբողջական բոլորմանէն յառաջ իշենց զաւակներն հրաժարեցնել Վարժարանէս, իրաւունք չունին նոցա

մասին որևէ է դպրոցական վկայական մը պահանչելու։

Ե.

Վարձութիւն եւ պատիժ.

Յօդ. 12. — Այն աշակերտն որ վարժարանի կանոնաց հնազանդ է, բարի վարք ունի և կ'յառաջգիմէ ուսմանց մէջ, արժանի է վարձատրութեան։

Վարձատրութեան աստիճաններն են.

Ա. Բարի նիշ.

Բ. Բարի նիշերու համեմատ միցանակ.

Գ. Հրապարակային գովեստ Տնօրէնի կողմէ.

Դ. Պատույ տախտակի վրայ արձանագրութիւն.

Ե. Գոհութեան վկայագիր։

Յօդ. 13. — Բացառիկ կերպով վարձատրութիւն կ'տրուի այն աշակերտաց որք ամսուան մէջ բնաւրացակայտթիւն չեն ունեցած և կամ թէ 'ի վարս և յուսմունս նշանաւոր կ'հանդիսանան։

Յօդ. 14. — Աշակերտ մը եթէ վարժարանի կանոնաց հակառակ վարուի, իւր վարքն յոռի և ուսմանց մէջ յետադէմ է, յետ յորդորի և աղդարարութեան պատժոյ կ'արժանանանաց։

Պատժոյ սպափճաննելմ են.

Ա. Յոսի նիշ.

Բ. Յոսին կանգնում:

Գ. Զբառանքէ զրկում:

Դ. Գրաւոր պատիժ.

Ե. Ուշ ճաշել կամ չորացել հաց.

Զ. Հրասդարակոյին պարսաւ.

Է. Պատժոյ տախտակին արտաքսովիլ.

Ը. Ծնողաց մասնաւոր յայտարարութիւն յանշանը բեռակիը բացառութ.

Թ. Առանձնապահութիւն.

Ժ. Արտաքսում:

Յօդ. 15. — Խոչպէս վարձատղութեան նոյնուիս և պատժոյ մասին բայցառիկ կերպով խիստ ծանր յանշանկինեւու պատիժն ՚ի դործ կը դրոի Տնօրինի կողմէ, Կըթական Խորհրդականի զիսակցութեամբ:

Զ.

Փամանակացոյց.

Յօդ. 16. — Վարժարանի բայցման և վակման ժամանակացոյցն, ըստ եղանակաց տարւոյն, հաստատուած է հետեւել կերպով:

	ԲԱՑՈՒՄ	ՓԱԿՈՒՄ	ՏԵԽՈՂՈՅ ԹԻՒՆ
	Ժ.Մ	Ժ.Մ	Ժ.Մ
Աեպտեմբեր, Հոկտ., Կոյեմբ.	7 1/2	4 1/2	9
Դեկտեմբեր, Յունվ., Փետր.	7 1/2	4	8 1/2
Մարտ, Ապրիլ, Մայիս.	7 1/2	5	9 1/2
Յունիս, Յուլիս.	7	5	10

Է.

Հանգսեան օրեր.

Յօդ. 17. — Վաղժարանը դոց մնալու սահմանեալ օւերն են.

Կիւրակի ամբողջ օրն.

Հինգշաբթի կէս օրէն յետոյ.

Տաւեկան արձակուրդի օրերն և հետեւեալ տօն օւերն.

Կաղանդ օր 1

Ա. Մնունդ 3

Վարդանանց հինգշաբթին 1

Մեծ բարեկենդանի շաբաթ օրն 1

Մեծապահքի առաջին երկուշաբթին 1

Տեսոնը առաջ 1

Աւագ շաբթու վերջին երեք օրելն	օր 3
Զատիկ (կիւրակէն չհաշուելով)	„ 2
Աւետումն Ա. Աստուածածնի	„ 1
Գիւտ նշխարաց Ա. Գրիգոր Լուսուորչի	„ 1
Սրբոց թարդ մահչաց Սահակայ և Մեղրոսկայ	„ 1
Վարդապէտի երկրորդ օչն	„ 1
Վերափխումն Ա. Աստուածածնի բշ. օր	„ 1
Խաչերացի բշ. օր :	„ 1

Ը.

Հարցաբննուրիւնք. — Մրցանակաբաւչի հանդես. —
Տարեկան արձակուրդ. — Տարեցան.

Յօդ. 18. — Վարժարանի մէջ երկու հարցաքըննութիւն տեղի կ'ունենայ. առաջինը՝ մանաւոր կամ կիսամեռայ՝ Յուլիս ամսոյ առաջին եօթնեկին մէջ, որմէ անմիջապէս յետոյ կ'ոկտի տարեկան մեծ աշճակուրդն՝ Յուլիս 15էն և կ'լրանոյ 0դ ոստափ վերջը. Երկրորդն՝ տարեկան մըցանակաբաշխի հանդէսով, Ապրիլի առաջին կիսամսոյն մէջ, որմէ անմիջապէս յետոյ կ'ոկտի վարժարանական տարեշրջանը։

Թ.

Արձակագրուրիւնք.

Յօդ. 19. — Վարժարանս պարտի ունենուլ հետեւալ օրագրութիւններն և տօմակներն.

Ա. Տօմար աշակերտութեան, ուր կ'արձանաւ-
զրուին աշակերտաց մուտքին, ելքն, տարիվն
ելն.

Բ. Տօմար ընդհանուր արձանագրութեան, ուր
կ'նշանակուին պարտաղանցութիւնք, դա-
ստուաց գիտուղութիւնք, տրուած պա-
տիմք, այցելութիւնք և գոլոցի վերաբեր-
եալ ամէն գէտք.

Գ. Օրագրութիւն ուսմանց, ուր կ'արձանագրուին
օր աւուր աւանդուած գասերութովանդա-
կութիւնք.

Դ. Օրագրութիւն ուսմանց նիշերու.

Ե. Օրագրութիւն բացակայութեանց և վարուց.

Զ. Տեսր ներկայութեան ընդհանուր պաշտօ-
նէլից.

Է. Տեսր գոյից և զրեանց.

Ը. Տեսր հարցաքննութեանց :

Ժ.

Ներքին Կանոնագիր.

Յօդ. 20. — Վարժարանս ունի ներքին Կանու-
նագիր մը՝ գծող աշակերտաց կրօնական, աղգային,

բարոյական, ուսմանց ու վարուց և առողջապահականական ընդհանուր պարտաւորութեանց մանրամասնութիւնը:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

— ուշակ —

ԺԱ.

Կազմակերպութիւն դպրոցական պահօնելից.

Յօդ. 21. — Վարժարանիս Ռւաճանց Ցայտազրի գործադրութիւնը կարելի ընելու համար, Աղջային վարչութեան կողմէ հաստատուած ու շահագործ թիւն է եօթ, որոց պաշտօննելու են.

Տնօրեն. — Հայերէնի Ա. դասաստ.

Վարիչ. — „ Բ. „ և ձայնաւոր.

Վարչուհի. — Մանկավարժ և ձեռագործի դասաստ.

Քահանայ. — Կրօնագիտութեան և բարոյագիտութեան դասաստ.

Արաքերէնի դասատ.

Ճրանուերէնի „ .

Տնօրեն. Դունապան *

ԺԲ.

Պատօն եւ պարտաւորութիւնն.

ՏՆՅՈՒՆ

Յօդ. 22. — Հայերէնի առաջին ուսուցիչն Տնօրէնի պաշտօն կ'վարէ միանդամայն :

Յօդ. 23. — Տնօրէնը պարտաւոր է գտնուիլ ՚ի վարժարանի բացման ժամէն ց'կէսօր և յետ կիսաւուր ժամը երկոքէն ցարձակուրդ :

Յօդ. 24. — Տնօրէնի պաշտօնն և պարտաւորութիւնքն են.

Ա. Հսկել Կանոնագրիս և Ուսմանց Ծրագրի անթերի գործադրութեան և հոգ տանիլ դպրոցի ընդհանուր բարեկարգութեան վրայ :

Բ. Հսկել բոլոր պաշտօնէից բարւոք ընթացից ինչպէս նաև նոյս պարտականութեանց անթերի կատարման վրայ :

Գ. Տեղեկագրել Կրթական Խորհրդականի եթէ պաշտօնեայ մը պարտազանց դըտնուի :

Դ. Բատ եղանակաց տարւոյն սահմանել դասաւանդութեանց ժամանակացոյցն :

- Ե. Այցելել ող եւ է ժամա մէջ վարժարանի գտառադներն, սրահներն և ամեն վայրելն՝ մաքրապահովեան և կարդապահովեան վրայ հակողոթիւն կատարելու համար :
- Զ. Տալ պէտք եղած հրահանդներն գործոցի ընդհանուր պաշտօնելից, ըստ արամազ բութեան կանոնագրիս և համաձայն Ռւսմանց ծրագրի :
- Է. Պարաստել և գործադրել գործոցի աշակերտաց Ներքին կանոնադիրն ըստ 20ոդյօդածի տրամազ բութեան :
- Ը. Ռւսուցաց կարծիքն առնուլ վարժարանի բարեկարդավեան վերաբերեալ խնդրոց մասին և գէթ ամիսը մէկ անդամ՝ զանոնք ՚ի ժողով դումարել գործոցի մէջ, ուսմանց ընթացքին և կրթական եղանակաց ու մէթոսներու վրայ կարծեաց փոխանակութիւն ընելու համար :
- Թ. Հսկել պարժարանի մէջ բունած օրագրութեանց և արձանադրութեանց կանոնաւութեան վրայ :
- Ժ. Իւրաքանչյուր առարկայի վերաբերեալ դասադրելն որոշել եեզր. Ռւսումնական Խորհրդէն ընդունուած դասագրքերէն՝ Խորհրդակցաբար Կրթական Խորհրդականին, և ՚ի հարկին դասաւանդութեանց եղանակներն բացատրել :

Յօդ. **25.** — Տնօրէնը կրնայ յաշաշերտութեան մանել աշակերտաց ծնողաց հետ՝ գրութեամբ կամ քահանայի միջոցաւ՝ ՚ի մասին անոնց բացակայութեանց, վարուց կամ ուսմանց վերաբերեալ ինդիբներու։

Յօդ. **26.** — Տնօրէնը պատասխանատու է դըպուցական գոյից և դրեանց որոց ցուցակն ինք պարտաւոր է բռնել, նոյնպէս պարտի օրինաւորապէս գործադրել դպրոցական առարկայից մատակարարութիւնը և ամեն ամսագլուխ ծախուց հաշիւը՝ ֆաքթիւրներով միասին՝ ներկայել առ կրթական Խորհրդական։

Յօդ. **27.** — Տնօրէնը վարժարանի մասնաւոր և տարեկան հարցաքննութիւնքը և մլցանակաբաշխի հանդէսը կատարելու համար պէտք եղածն ՚ի գործկ'դնէ։

Յօդ. **28.** — Տնօրէնը դպրոցական տարեվարձին առթիւ վարժարանի տարեշրջանին տեղեկադիրն կը պատրաստէ և կ'ներկայէ կրթական Խորհրդականին։

Յօդ. **29.** — Թէ՛ կանոնագրիս գործադրութեան մասին դիւրութիւն և միջոց ոնենալու և թէ՛ նոյնին

մէջ չնախատեսուած պարագայից առժիւ հրահանդ ստանալու համար Տնօրէնը պարտի դիմել առ կրթական խորհրդական :

ՎԱՐԻՉ ԵՒ ՎԱՐՉՈՒՀԻ

Յօդ. **30.** — Վարիչի և վարչուհոյ պաշտօնն և պարտաւորութիւնքն են.

Ա. Ամեն առառու, ըստ ժամանակացոյցի, դպրոցի բացման ժամէն մէկ քառորդ առաջ ներկայ դանուիլ անդ, կէսօրուան ճաշը դպրոցի մէջ ընել և արձակումէն յետոյ մեկնիլ :

Բ. Մասնաւոր տետրակ մը բռնել որու մէջ պէտք է նշանակէ բացակայից անունները ինչպէս նաև օրական վարուց նիշերը :

Գ. Աւանդել Ռւսմանց Ծրագրի առաջին երկու տարիներու (տարրական դասընթացք) վերաբերեալ դասերն ըստ հրահանդաց Տնօրէնի :

Դ. Աշակերտաց համար սահմանուած ներքին կանոնագրի գործադրութեան խստիւ հրակել, ինչպէս նաև ժամանակացոյցի համեմատ դասաւանդութիւնները կատարել :

- Ե. Գործադրել Ժամանակացոյցի մէջ նշանակածած գործադրութիւնքը և որոշեալ ժամեւրուն զանդակի ձայնով աշակերտներն հրաւիրել՝ի գասարան կամ՝ի զբօսարան :
- Զ. Աշալուրջ կերպիւ և անխտրութեամբ հսկողութիւն կատարել աշակերտաց վարուց և բարուց վրայ, ինչպէս նաև աշխատասիրութեան, բարոյականի, մաքրութեան և առողջապահութեան պայմանաց վրայ :
- Է. Յանցաւրաշակերտներն ենթարկել պատժոյ այն աստիճաններուն որոց գործադրութիւնն իրենց յանձնուած է Տնօրէնի կողմէ և դիմել այս վերջնոյն՝ երբ աշակերտն զգաստացած չէ :
- Ը. Իրենց տուները դարձունել հիւանդ և անմաքուր տպայքը :
- Թ. Զբօսանքի ժամանակ հսկել աշակերտաց խաղերուն վրայ :
- Ժ. Ամեն շաբաթ երեկոյ, կիրակի առաւօտ և տօնօրեր եկեղեցի առաջնորդել աշակերտները, նոյնպէս և Զատկի, Ա. Ծննդեան և տաղաւարներուն հաղորդուելու համար :
- ԺԱ. Ըստ ամենայնի գործադրել Տնօրէնի կողմէ իրենց տրուած հրահանդները :

Յօդ. 31. — Վարիչն, միանգամայն ձայնաւոր դասատու, պաշտի աւանդել երկառու սանուց աղդ. Երգեր և մանչ տղոց եկեղեցական բաժշտութիւն, նաև շապիկ հայնիլ 'ի Ս. եկեղեցով կիրակի և տօն օրերը (¹) :

Յօդ. 32. — Վարչուհին բաց 'ի վերոյիշեալ պարագաւորութեանց (30րդ յօդուած) ունի նաև պաշտամութիւն ուսուցանելու աղջկանց ասեղնագործ, կար և ձեւ :

Յօդ. 33. — Վարիչն և վարչուհին միանգամայն իրմէ դասատու՝ պաշտին դասաւանդութեանց միջոցին կատարելապէս համակերպիլ Դասատուաց վերաբերող յօդուածոց տրամադրութեան :

ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Յօդ. 34. — Կրօնագիտութեան և բարոյագիտութեան դասերն աւանդելու պաշտօնը կը յանձնուի մի արժանաւոր քահանայի զոր կ'կոչէ տեղւոյս Աղդ. Վարչութիւնը Ս. Աստուածածնի եկեղեցոյ քահանայից դասէն :

(1) Զայնաւոր դասատուին պարբառութիւնն եւ պատօնն յԵկեղեցւոց, զծուած են Եկեղեցւոյ պատօնելից մասնաւոր կանոնագոյն մէջ .

Յօդ. **35.** — Իւրեւ այցելու պաշտօնեայ ազգ՝ վայժականիս, պարսի Կանոնագրոյս մէջ դասատուաց և պաշտօնէից վերաբերեալ յօդուածոյ արամագը ըստթեան համակերպիլ :

ԴԱՍԱՏՈՒՔ

Յօդ. **36.** — Ամեն դասատու պարտաւոր է ըստ Ժամանակացոյցի որոշեալ ժամերուն անվրէպ դանուիլ ի դասարանի և երկւեռ աշակերտաց հետ խօսիլ այն լեզուաւ զոր կ'աւանդէ ինք, և չ'մեկնիլ նախ քան զաւարտ իւր դասուց :

Յօդ. **37.** — Ամեն դասատու իւր պաշտօնը կը վարէ Տնօրէնի կողմէ իրեն արուած հրահանդաց և մէթոտին համեմատ և արդարասիրութեամբ ու զործունէութեամբ իւր դասերը կ'աւանդէ :

Յօդ. **38.** — Ամեն դասատու պարտաւոր է ըստել օրագիր մը որու մէջ պիտի նշանակէ ամեն օր իր աւանդած դասերու համառօտ բովանդակութիւնը, պարտի ունենալ նաև նիշերու տեարակ մը ուր կ'նշանակուին աշակերտաց վարուց և ուսմանց աստիճաններն :

Յօդ. 39. — Դասախոսութեանց միջոցին աշակերտաց կարգապահութեան, ունկնդրութեան և լռութեան մասին խստապահանչ պարտի լինիլ դաստուն։

Յօդ. 40. — Դասատուք պարտազանց և անկարգակաները պարտին անմիջապէս նշանակել Ուսմանց Օրագրութեան դիտողութեանց սիւնակին մէջ՝ յանցանքին տեսակով։ Եթէ աշակերտն այսու չ'զգաստանայ, պատժոյ երկրորդ և երրորդ աստիճանները կ'գործադրէ (յունինիշ և յոտին կանգնում), և եթէ դարձեալ անուղղայ մնայ և դասարանի բարեկարգութիւնը խանգարէ, այն ատեն դասարանէ կ'արտաքաէ զայն՝ Տնօրէնին իմաց տալով։

Յօդ. 41. — Ամեն դասատու պարտաւորէ մարդավարութեամբ վարուիլ աշակերտաց հետ, անվայել բառերով՝ չ'սասաել և 'ի մի բան՝ բարեկրթութեան և բարոյականի կենդանի օրինակ լինիլ անոնց։

Յօդ. 42. — Դասատուք պարտին Տնօրէնին դիմել՝ թէ՛ աշակերտաց վարուց և ուսմանց վերաբերեալ կարեոր խնդիրներու և թէ՛ բացառիկ պարագաներու մասին հրահանգ ստանալու համար։

ՏՆՏԵՍ — ԴՐԱՆԱՊԱՆ

Յօդ. 43. — Տնտեսը պարտի գիտնալ հայերէն
խոսիլ :

Իր պարտականութիւնքն են.

Ա. Դպրոցի բացմանէ մէկ ժամ յառաջ դանուիլ
անդ՝ իր ներկայութիւնն անհրաժեշտ է
մինչև արձակուրդ :

Բ. Ցետ արձակուրդի վարժարանի ամբողջ վայ-
րերը մաքրել :

Գ. Ամեն առաւօտ դարակներու, նստարաննե-
րու և սեղաններու վրայէ փոշիները մաքրել
և օրահներն և բակերը ջրել :

Դ. Ամիսը մէկ անգամ վարժարանն ամբողջ մաք-
րել լուացմանը :

Ե. Կէսօրին վարժարանը ճաշող աշակերտաց կե-
րակուրները սեղանատան մէջ զետեղել
և եթէ զսասակար ուտելիք մը կայ՝ Տնօ-
րէնին խմաց տալ :

Զ. Ջրերու կարասները, սավորներն և գաւաթ-
ները կատարեալ մաքրութեան մէջ պահել :

Է. Այցելուաց գալուստն խմայնել Տնօրէնին :

Ը. Դպրոցի դուռը փակել դասախոսութեանց
սկսելու միջոցին և առանց Տնօրէնի հրամա-

Նին չ'ձգել որ աշակերտ մը դուրս ելնէ
արձակուրդէն առաջ :

Թ. Կատարեալ հնազանդութիւն պարտի ունե-
նալ առ Տնօրէն և ճշդիւ կատարել նորա
հրամանները թէ՛ ի վարժարանի և թէ՛
վարժարանէ դուրս :

ՃԳ.

Ընդհանուր տրամադրութիւնն պատօնեից վրայ

Յօդ. 44. — Դպրոցի պաշտօնեայք կ'ընարուին
կրթական Խորհրդականի ձեռամբ և Ազգ. Վարչու-
թեան հաւանութեամբ : Իրենց ամսաթոշակը կը
վճարուի Ազգ. մնացուկէն՝ կրթական Խորհրդականէ
ստորագրեալ ցուցակի մը վրայ իրենց անդորրագրոյն
փախարէն :

Յօդ. 45. — Պաշտօնեայք Երկու դասի կ'բաժ-
նուին, Մնացուն եւ Այցելու : Առաջիններն պարտին
մնալ ՚ի վարժարանի ամբողջ օրն, իսկ վերջիններն
ժամանակացոյցին մէջ որոշուած ժամերուն :

Յօդ. 46. — Ամեն պաշտօնեայ պարտի ամեն օր
ստորագրել ներկայութեան աետրին մէջ :

Յօդ. 47. — Առանց բանաւոր պատճառի բացակայութիւնը պարտազանցութիւն կ'նկատուի։ Բանաւոր պատճառք են՝ հիւանդութիւնք և պաշտօնէին կամքէն անկախ պարագայ մը, դէպք մը, զոր պէտք է Տնօրէնին գրով իմացնել և ի հարկին ապացուցանել։ Որևիցէ բացակայութիւն որ Տնօրէնին իմաց տրուած չէ՝ անբանաւոր կ'նկատուի։ Տնօրէնն ուղղակի Կըրթական Խորհրդականին կ'հաղորդէ իր բացակայութեան պատճառը։

Յօդ. 48. — Մնայուն պաշտօնէից պաշտօնավարութեան տարեցրաննը կ'սկսի մեծ արձակուրդի լրանալուն հետեւեալ օրն (Մեպաեմբ. 15ն) և կ'վերջանայ Յուղիս 1օն։

Յօդ. 49. — Արձակուրդի սկիզբը մնայուն պաշտօնեայք Կըրթական Խորհրդականին կողմէ կ'ստանան յաջորդշրջանի մէջ իրենց պաշտօնի շարունակութեան համար գրաւոր հրահանգներ։ Հակառակ պարագայի մէջ, այսինքն երբ մնայուն պաշտօնեայ մը որ' ևէ գրաւոր հրահանգ չ'ստանար Կըրթական Խորհրդականի կողմէ, ինքզինքը պարտի նկատել իբր հրաժարեալ և միայն իրաւունք կ'ունենայ արձակուրդի թոշակներուն։

Յօդ. 50. — Այցելու գասառողք, որ առ ժամանակեայ են, արձակուրդի թոշակաց իրաւունքը չ'ունին՝ եթէ առ նուաղն 42 ամիս պաշտօն վարած չեն 'ի վարժարանի (չ'հաշուելով արձակուրդի ամիսները):

Յօդ. 51. — Թէ՛ մնայուն և թէ՛ այցելու պաշտօնեայք եթէ հրաժարիլ ողէն, պարտին առնուազն ամիս մ'առաջ իրենց հրաժարականն հաղորդ ել գրաւորապէս կրթական Խորհրդականնին՝ միջոցաւ Տնօրէնի, իսկ Տնօրէնն ուղղակի. հակառակ պարագայի մէջ կ'տուժ են մէկ ամսական և բարւոք պաշտօնափարութեան վկայագիր սունամալու իրաւունքէն կ'զրկուին:

Յօդ. 52. — Պաշտօնեայք 41 րդ յօդուածի համեմատ աշակերտաց հետ վարուելու պարտաւոր լինելով, բացարձակապէս և խոտիւ արդիվալ է իրենց դանիւ պատժել աշակերտանելն:

Յօդ. 53. — Կանոնագրի որևէ տրամադրութեան հակառակ վարուող պաշտօնեայ մը պարտազանց կը նկատուի:

Պաշտօնէի մը պարտազանցութեան դէմ պատժական օրինագրութեան աստիճաններն են հետեւալք.

Ա. Աղդարաբութիւնք

Բ. Ամսականի զեղում

Դ. Ամսականի դադարում՝ պաշտօնի շարունակ
կութեամբ

Դ. Պաշտօնէ դադարում.

Բացառիկ և ծանր յանցանքի մը պարագային
վերոյիշեալ աստիճանները զանց կ'առնուին :

Յօդ. **54.** — Պաշտօնեայ մը որ կամի իւր պաշտօնի վերաբերեալ հարցի մը համար խնդրամատոյց լինիլ առ Ազգային Վարչութիւն, պարտի նախ դիմել Կրթական Խորհրդականի՝ միջոցաւ վարժարանի Տնօրէնին :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ ԹԻՍՏԱՆՅ

ԽՈՐԵՆԵԱՆ ԵՐԿՐՈՒՄ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՀԱՅՈՑ Ի ԳԱՀԻՐԵ

ՏԱՐԻՔ ՈՒՍԱՆՈՂԻՆ 6 — 12

Աւանդելի ուսմանց բովանդակութիւն

Կրօնիք եւ քարոյագիտութիւն
Հայերէն լեզու¹
Արարերէն լեզու²
Թրանսերէն լեզու³
Թուարանութիւն
Ազգ. պատմութիւն
Աշխարհագրութիւն
Երաժշտութիւն
Ասեղնագործ, կար, ձեւ
Մարմնամարզութիւն

ԲԱԺԱՆՈՒՄ	ԵՐԱԾՈՒՄ
1. Տաղողական դասընթացք .	2 ասութիւն
2. Միջին	"
3. Բարձրագոյն	"

I. ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. ՏԱՐԻ

(ՏԱՐԻՔ ՈՒՍԱՆՈՂԻՆ 7)

Հայերէն լեզու. — Ալբենարան — հեգողութիւն
— ընթերցանութիւն — բացատրութիւն թանձրա-
ցեալ բառերու նշանակութեան — ծանօթ առար-
կայից վրայ հարցապատճիսան — բառագիտութիւն
— գրավարժութիւն :

Կրօնֆ. — Տէրունական աղօթք — բարոյավէպք —
խրամք :

Թիւ եւ հաշիւ. — Ծանօթութիւն թուանշանաց —
համրել — թիւ գրել ու կարդալ — մշակութիւն
4—10 թուոց — մտաւոր հաշիւներ :

Հայերէն խօսակցութեան վարժեցնել մանուկ-
ներն՝ զուարձալի բարոյավէպներ պատմելով և
պատմել տալով — դոց ընել տալ ծանօթ առար-
կայից անուններ :

Բ. ՏԱՐԻՒ

(ՏԱՐԻՒՔ ՈՒՍԱՆՈՂԻՆ 8)

Հայերէն շեզու. — Ընթերցում առողանութեամբ
և բացատրութեամբ իմաստից — կաղմութիւն պարզ
նախադասութեանց — բառադիսութիւն — ուղ-
ղագրութիւն — օրինակութիւն — ուսումն ՚ի բերան
փոքր ռտանաւորներու և արձակ հաստածոց :

Կրօնի. — Աղօթք — Ա. Գլոց պատմութիւն —
առ ծնողս և առ ընկերս պարստաւորութեան յորդորող
խրառներ :

Թուաբանութիւն. — Մշակութիւն 1—100 թուոց
— չորս գործողութիւնք մտաւոր և գրաւոր — պարզ
խնդրոց լուծում :

Գրավարժութիւն. — Պարզ գիր — գլխագիր՝
գրատախտակի և տետրի վրայ :

2. ՄԻԶԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Գ. ՏԱՐԻ

(ՏԱՐԻՔ ՈՒՍԱՆՈՂԻՆ 9)

Հայերէն լեզու. — Բնիթերցում՝ առողանութեամբ
և բացատրութեամբ — բառագիտութիւն — ող-
զագրութիւն — օրինակութիւն — քերականական
հրահանդ — աստիճանաբար աւանդում աշխարհիկ
լեզուի քերականութեան ուժն մասանց բանի —
ուսումն ՚ի բերան առարկայից, ուսանաւորներու, և լու-

Կրօնի. — Ա. Գրոց պատմութիւն, հին ևնոր կոսա-
կալանաց գլխաւոր մասերը՝ բերանացի։

Աշխարհագրութիւն. — Տեղական — Եղիպտոսի
քաղաքական բաժանմունք — գլխաւոր քաղաքներ,
բերք, օդ, ջուր, և լու — Գահիքէի վրայ ամփոփի անզե-
կութենք։

Ազգ. պատմութիւն. — Հայկազանց և Արշակոնեաց
գլխաւոր մասերը՝ բերանացի։

Գեղագրութիւն. — Վարժութիւն հասարակ գրեռու — պարզ գլխադիր :

Արաբերէն լեզու. — Ծանօթութիւն տառերու — հեգողութիւն — ընթերցում — գրավարժութիւն :

Ֆրանսերէն լեզու (¹). — Ծանօթութիւն տառերու — հեգողութիւն — ընթերցում — բառերու և բայերու ուսումն ՚ի բերան — գրավարժութիւն :

Երաժշտութիւն. — Ազգային և եկեղեցակ. երգեր — վարժութիւն վոխերու :

Դ. ՏԱՐԻ

(ՏԱՐԻՔ ՈՒՍԱՆՈՂԻՆ 10)

Հայերէն լեզու. — Շարունակութիւն նախորդ տարուան առարկայից — քերականանական վերլուծութիւն — շարադրութիւն պատմական պարզ նիւթոց վրայ :

(1) Ֆրանսերէն լեզուի ուսումն կ սկսի Գ. Տարւոյ երկրորդ վեցամյակն :

Կրօնիք. — Ա. Գրոց պատմութիւն — Քրիստոնէական մանր ուսմունք :

Թուարանութիւն. — Կրթութիւն ամբողջ թուց — կոսովակներ — խնդրոց լուծում :

Աշխարհագրութիւն. — Եւրոպա և Ասիա համուօտ :

Ազգ. պատմութիւն. — Մարզպանիք և Բագրատունիք :

Գեղագրութիւն. — Նրբագիր — գլխագիր :

Արաբերէն յեզու. — Ընթերցում — քերականական ծանօթութիւնք — ուղղագրութիւն — գրավարժութիւն — բառագիտութիւն — զրուցատրութիւն :

Ֆրանսերէն յեզու. — Ընթերցում — շարունակութիւննախորդ շրջանի առարկայից — քերականական կրթութիւնք — ուղղագրութիւն — գրավավութիւն :

3. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

b. ՏԱՐԻ

(ՏԱՐԻՔ ՈՒՍՎԱՆՈՂԻՆ 11)

Հայերէն լեզու — Բնիթերցում առողաճութեամբ և բացառութեամբ — գրաբար քերականութիւն ցկէս — թարգմանութիւն գրաբարէ աշխարհիկ՝ Աւետարանէ — քերականական վերլուծութիւն — շարադրութիւն — պարզ նամակադրութիւն — ուղղագրութիւն — ուսումն ՚ի բերան հատընտիր հատուածոց — համառօտ պատմւթիւն հայ գրականութեան :

Կրօնիք. — Ա. Գրոց պատմանթիւն — քրիստոնէական բարոյախօսութիւն :

Թուաբանութիւն. — Կրկնութիւն կոտորակաց — պարզ և բազադրեալ երեքի կանոն — մեղրական դրութիւն համառօտ :

Աշխարհագրութիւն. — Ափշիկէ — Ամերիկա :

Ազգ. պատմութիւն. — Ոռքինեանք և Ժամանակ
կակից պատմութիւն :

Արաբէրէն յեզու. — Ընթերցում — Խարզմանու-
թիւն — բառագիտութիւն — քերականութիւն —
ողջագրութիւն — պարզ նամակագրութիւն —
գեղագրութիւն :

Թրանսերէն յեզու. — Ընթերցում բացատրու-
թեամբ — Խարզմանութիւն — քերականութիւն
— վերլուծութիւն — ողջագրութիւն — ուսումն ՚ի
բերան — գեղագրութիւն — զբոցատրութիւն :

Զ. ՏԱՐԻ

(ՏԱՐԻՔ ՈՒՍԱՆՈՂԻՆ 12)

Հայերէն յեզու. — Նախորդ տարուան առարկայից
շարունակութիւն — գրաբար քերականութիւն
ցվերջ — վերլուծութիւն քերականական և տրամա-
բանական — շարագրութիւն — թղթակցութիւն —
ուսումն ՚ի բերան ազգային և օտար ընափը մատենա-
գրաց հաստածներու — շարունակութիւն հայ մատե-
նագրութեան — գրագիտութիւն համառօտ :

Կրօնիք. — Բարոյագիտութիւն. — ուսումն պարտուց։

Թուաբանութիւն. — Կրկնութիւն նախընթաց տարւոյ դասելուն — արևտրական հաշիւք, ընկերութեան, տոկոսի, զեղչի, և լն։

Աշխարհագրութիւն. — Ընդհ. կրկնութիւն նախուգ դասուց — Ավելիանիա և նոր Հայաստան։

Ընդհ. պատմութիւն. — Հին, միջին և նոր պատմութեան գլուխաւոր դէպքեր։

Արաբերէն լեզու. — Ընթերցում բացառութեամբ — թարգմանութիւն — թղթակցութիւն — քերականական կրթութիւն — համաձայնութիւն — վերլուծութիւն — ուղղագրութիւն — դեղագրութիւն։

Ֆրանսերէն լեզու. — Ընթերցում բացառութեամբ — թարգմանութիւն ֆրանս-հայ և փոխադարձ — շարագրութիւն — քերականութիւն — համաձայնութիւն — վերլուծութիւն քերականական և տրամաբանական — ուղղագրութիւն — զրուցառութիւն։

Թիվ 688. — Խորէնեան Ազգային երկսեռ վարժարանի
սոցն կանոնագիրս յետ քննութեան, ինչ ինչ յուելումներով
որպէ նշանակեալ են ի լուսանցքին, վաւերացեալ է Ազգ.
Գաւառ. Վ. բաշութեան Պատ. Քաղաքական Ժողովոյ 16/28
Սեպտ. 1895ի նատի մէջ, որուատենազրութեան մէջ ամբող-
ջութեամբ ընդօրինակեալ է կանոնագիրս :

ՄԵՍԱՐ Ա.Դ.ՕԹԱՐԱՐ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ,

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ

Գանիրէ սեպտ. 19/1 նոկտ. 1895

ԵԳԻՊՏՈՍԻ



ԴԻՒԱՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

Ազգ. Գաւառ. Վարչութեան



Թիվ 689



Վաեմաշոյ

ԿԱՐԱՊԵՏ ՊԵՅ ՇԵՐԻՏՃԵԱՆ,

Կրբական Խորհրդական եւ անդամ Քաղաք. Ժողովոյ

Ի ԳԱՅԻՐԷ.

Վ.ՍԵՄԱՇՈՒԹ ՊԵՅ,

Ինչպէս զիտէք, Ազգային Գաւառական Վարչութեան
Քաղաքական Ժողովն իս 16/28 Սեպտեմբեր 95, նատին մէջ
վաւերացուց Զեր ջանիւք պատրաստուած Վարժարանի նոր

կանոնագիրն, ուր ամփոփեալ է և Ուսմանց Յայտադիրն և
որ արդէն, նախորդ նատի մէջ քննուած էր ի Ժողովին և մէկ
քանի յաւելումներ եղած. այն յաւելու մերն, որը Զեր կող-
մանէ ևս ընդունուած են, կանոնագրի բնագրին վրայ կորմիր
մելանով նշանակուած են :

Եւ որովհետեւ յիշեալ կանոնագիրն իր ամբողջ թեմպ-եամբ
ընդօրինակուած է Քաղաքական ժողովյա ատենագրութեան
տուարին մէջ, ընդ զրոյս Զեղ կը վերադարձնեմք բնագիրն,
688 թուավ վաւերացեալ ստորագրութեամբ մեր և կնքով
Առաջնորդարանին :

Լի յուսով թէ Զեր վաեմաւթեան բաջարթուն Հսկողու-
թեան ներքե՞նոյն կանոնագրի գործադրութիւնն պիտի տայ-
լուագոյն արդիւնքներ, չնորհակալեաց և յարգանաց զգա-
ցումներով մաղթելով լիակատար յաջողութիւն՝

ՄԱՍՄ ԱՂՅԹԱՐԱԲ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ.

ՇԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

ԵՒ

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ա. Վիճակիս տղգոյին Ընդհանուր Ժողովը, իր 1894 նոյեմբ. 25/7 գեկտեմբ. թիւ նատի մէջ, որոշած է որ 1895 Յունուար 1էն սկսեալ՝ զաղրի Քաղաքական Խորհրդայ կազմութիւնն և երկու անդամք աւելնան Քաղաքական Ժողովոց թուայն վրայ և անոնցմէ մին վարժարանի և միւսն եկեղեցւոց մատակարարութեան հոգն ստանձնէ՝ ընդ հսկողութեամբ Քաղաքական Ժողովոց :

Բ. Կրթական Խորհրդականը կ'վարէ վարժարանի զորածերն՝ Քաղաքական Ժողովին վաւերացեալ կանոնագրի, Ռամանց Յայտագրի և Պիտենի համաձայն, առկոյն Կրթական Խորհրդականն իրաւունք ունի վարժարանի պաշտօնէից ամսականոց մասին յաւելում կամ զեղչում առաջարկելու Քաղաքական Ժողովին՝ վարժարանի ընդհանուր ծախուց յատկացեալ գումարին որոշեալ սահմանին մէջ :

Գ. Վարժարանի պաշտօնեաները կ'անուանուին կամ կ'արձակուին՝ Կրթական Խորհրդականի առաջարկութեամբ և Քաղաքական Ժողովոց որոշմամբ:

Դ. Վարժարանի պաշտօնէից ամսականներն ուղղակի Առաջնորդարանի Գանձապետէն կ'վճարուին Կրթական Խորհրդականէ վաւերացեալ ամսուկան ցանկերու Համաձայն։ Նոյնպէս վարժարանի այլևայլ պիտոյից ծախքերն Ազգանուուկէն կ'վճարուին՝ Կրթական Խորհրդականէ վաւերացեալ ստացականներով։

Ե. Վարժարանի վերաբերեալ ո՛ւ և իցէ խնդիր՝ երբ ուղղակի Փաղաքական Ժողովին կ'ուզայ, Ժողովը զայն նախապէս կ'յղէ առ Կրթական Խորհրդական և անոր Կարծիքն ստանալէ յետոյ կ'ուստայ իր որոշումն և կ'հաղորդէ զայն Կրթական Խորհրդականին, ի գործադրութիւն։

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

ՄԱՍՆ Ա.

	ԵՐԵՑ
Քայտագիր Ռւսմանց	3
Պայմանք Ընդունելութեան աշակերտաց	4
Պարտաւորութիւնք	5
Ծնողք	6
Վարձատորութիւն և պատիժ	8
Ժամանակացոյց	9
Հանգստեան օրեր	10
Հարցաքննութիւնք, Մրցանակաբաշխի հանդէս, տարեկան արձակուրդ, տարեշրջան	11
Արձանագրութիւնք	11
Ներքին կանոնագիր	12

ՄԱՍՆ Բ.

Կազմակերպութիւն դպրոցական պաշտօնելից	14
--	----

ՊԱՇՏՕՆ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՔ

ՏՆՈՐԵՆ	15
ՎԱՐԻՉ ԵՒ ՎԱՐՉՈՒՀԻ	18
ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ	20
ԴԱՍԱՏՈՒՔ	21
ՏՆՏԵՍ-ԴՈՆԱՊԱՆ	23
ԸՆԴՀԱ ՄՐԱԺԱԳՐՈՒԹԻՒՆՔ պաշտօնելից վրայ	24
